Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23.6/[183958]-14

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-ԻՆ ԺԱՄԸ 12:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Վ. Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Գ. Պողոսյան	«Գործարար շահերի պաշտպանության ցանց» ՀԿ-ի համակարգող
Մ. Առաքելյան	«Հայաստանի տրանսպորտային առաքողների միություն» ՀԿ-ի նախագահ
Փ. Թադևոսյան	«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ
Կ. Մարտիրոսյան	Երևանի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն

Մասնակիցներ՝

Վ. Գաբրիելյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Ս. Կարայան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Վ. Միրումյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Վ. Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի պաշտոնակատար
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Վ. Կարապետյան	«ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի գործադիր տնօրեն

Գ. Պողոսյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Ա. Ասլանյան	«ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ
Հ. Ավագյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Դ. Հարությունյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Ի. Հովհաննիսյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ

«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի վերանայման անհրաժեշտության մասին

(Հ. Ավագյան, Վ.Գաբրիելյան, Ս.Կարայան, Վ.Միրումյան, Տ. Սարգսյան)

9. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին՝ առավելագույնը մեկշաբաթյա ժամկետում մշակել շրջանառության հարկի 1 տոկոս դրույքաչափի կիրառման ժամանակ հարկային մարմինների կողմից շրջանառության հարկի 1 տոկոսի դաշտում աշխատող ընկերությունների կողմից ձեռք բերված (փաստաթղթերով հիմնավորված) ապրանքաշրջանառության ստուգումների անցկացման և բողոքարկման ընթացակարգը և այն շահագրգիռ կողմերի հետ քննարկելու նպատակով ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն.

2) առաջարկել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար Գ. Պողոսյանին՝ մեկշաբաթյա ժամկետում շահագրգիռ կողմերի հետ քննարկել այլընտրանքային (շրջանառության հարկի տարբերակված համակարգի կիրառման) ռեժիմների հետևյալ հնարավոր տարբերակները՝

ա. կկիրառվի տարբերակված համակարգ: Այսինքն, 1 տոկոս՝ ապրանքների ձեռքբերման առնվազն 80 տոկոսի չափով փաստաթղթավորելու դեպքում, 2 տոկոս՝ ապրանքների ձեռքբերման առնվազն 50 տոկոսի չափով փաստաթղթավորելու դեպքում և 3.5 տոկոս՝ ընդհանրապես չփաստաթղթավորելու դեպքում,

բ. կկիրառվի երկաստիճան համակարգ: Այսինքն, տնտեսավարող սուբյեկտը, կամավորության սկզբունքով, պետք է դիմի հարկային մարմին և ընտրի շրջանառության հարկով հարկման դրույքաչափը (1 տոկոս կամ 3.5 տոկոս), ընդ որում շրջանառության հարկը 1 տոկոս ընտրելու դեպքում տնտեսվարող սուբյեկտի ապրանքաշրջանառությունը պետք է փաստաթղթերով հիմնավորված լինի: Այնուհետև, ըստ տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հայտարարագրի, հարկային մարմինները կիրականացնեն համապատասխան վերահսկողություն և կկիրառեն օրենքով սահմանված վարչարարություն՝ խախտումների բացահայտման դեպքում ենթարկելով համապատասխան պատժամիջոցներ,

գ. կսահմանվի շրջանառության հարկի 1 տոկոս դրույքաչափ՝ ձեռք բերվող ապրանքների գծով փաստաթղթերի հաշվառման պահանջի սահմանմամբ, որի դեպքում այդ տեսանկյունից օրենսդրորեն հստակ կնկարագրվի ստուգումների անցկացման և բողոքարկման ընթացակարգը>

3) ընդունել ի գիտություն, որ խնդրո առարկա հարցի վերաբերյալ վերջնական առաջարկությունը, ինչպես նաև այլ հարցեր կներկայացվեն առաջիկա կայանալիք Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի նիստի քննարկմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

araqvoxPMDZ17.01.14